

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի առևտրական գազեր:

Հրատարակում է շաբաթը մեկ անգամ կես թերթ, կիրակի օրերով: 10 ամսվոց գինը Մարտից մինչև Յունուարը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրսը 3 ման. թ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղթյալն ստորագրվի կարելի է խմբագրողի մոտ:
Գաղթյալն հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքայի մասին: Առ հասարակ ուտել-խմելիքի ընկերութիւնները 2 շանակութիւնը եւ Միտավա եւ Պետերբուրգ քաղաքների է դպիտի ընկերութիւնները: Չամազան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ:

Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքայի մասին: Նորին Կայսերական Բարձրութիւն, Կովկասեան Փոխարքան էս ամսի 2-ին երեկոցեան 8 սահաթին եկաւ Թիֆլիս իր Բարձրմի ամարանոցից:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

սեպտեմբերի 3-1866.

Էս տարի յուլիսի 20-ին Ռուսաց ներքին գործերի մինիստրը Հաստատեց Միտավա քաղաքի ուտել-խմելիքի ընկերութենի կանոնադրութիւնը:

Ահա էդ ընկերութենի զլխաւոր պայմանները:

§ 1. Միտավա քաղաքի ուտել-խմելիքի ընկերութենի նպատակն է իր անդամներին լաւ ուտել-խմելիք հասցնել չափաւոր գնով եւ էդպիսով միջոց տալ նրանց փող յետ պցելու, սրահարմարութիւն անելու:

§ 2. Էդ նպատակներին հասնելու համար ընկերութիւնը պայմանադրեով կապվում է վաճառականների հետ, որ նրանք լաւ ուտել-խմելիք հասցնեն ընկերութենին, փողոցի դներից մէկ նշանակած բան պահապանելով: Ընկերութիւնը բաց ի էդ կարող է իրա համար առուտուր անելու դուքաններ բաց անել, առաջուց, ինչպէս ընդհանուր կանոնն է, հրաման առնելով, էդուր համար, ումից պէտք է:

§ 3. Ընկերութենի գործածական (оборотный) դրամազուլսը կազմվում է անդամների տված որոշած փողից (§ 6):

§ 4. Ընկերութենի պահեստական (запасный) դրամազուլսը կազմվում է ա. գործածական դրամազուլսից ստացած զուտ վաստակի 10% -ից, (§ 21.) բ. ընկերութենից դուրս գնացող անդամների յետ աաւուր գումարից յետ պահած 50 կոպեկից, (§ 12) եւ գ. ինվենտարի (ընկերութենի ունեցած կայքի) համար բռնած փողից, (§ 21): Պահեստական դրամազուլսը կարելի է մտնել միայն ցատտիկ կարիք ժամանակները ընդհանուր ժողովի կարգադրութենով:

§ 5. Էս ընկերութենի անդամ կարող են դառնալ ամեն կոչումի մարդիկ, որոնք կը կամենան էս կանոնադրութենով վարվիլ:

§ 6. Իւրաքանչիւր անդամ ընկերութիւն մտնելիս պէտք է վճարէ մէկ անդամով ոչ պակաս 5 մանէթից եւ ոչ աւելի 500 մանէթից: Բաց ի էդ նա պարտաւոր է վճարել 10 կոպեկ՝ ընկերութենի դանձապետի նրան տված հաշւատետրի համար:

§ 7. Իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի առաջին անգամ նրանից պահանջվելու վերոյիշեալ գումարի 1/10 մասը, այս ինքն 50 կոպեկ վճարել ընկերութենին էն պայմանով, որ մնացած գումարը քիչ քիչ լրացնվի էն վաստակով, որ հաշւով կհամնի նրան:

§ 8. Նրբ որ էդ վաստակը արդէն առաջին անգամ վճարած 50 կոպեկի հետ 5 մանէթից անց կենաց, էն ժամանակը 5 մանէթից աւելին կարելի է յետ վիւ առնէ անդամը, եթէ կամենայ: Բաց անդամի ներկայացրած 5 մանէթը ոչ երբէք չի յետ տվիլի նրան:

§ 9. Անդամը կարող է ընկերութենի դանձապետից պահանջել իր ամեն մէկ ա-

ւելացած 5 մանէթի համար առանձին ստացաթղթեր:

§ 10. Էդ ստացաթղթերի ներկայացնելիս ընկերութենի դանձապետը փողերը վճարում է էս կարգով՝

- 1-ին ստացաթղթի համար ներկայացնելուց—. 1 օր յետոյ,
- 2 բողից—5 երրորդի—2 շաբաթ յետոյ,
- 6 երրորդից—10 երրորդի 3 —
- 11 երրորդից—20 երրորդի 4 —
- 21 երրորդից—30 երրորդի 5 —
- 31 երրորդից—40 երրորդի 6 —
- 41 երրորդից—50 երրորդի 7 —
- 51 երրորդից—60 երրորդի 8 —
- 61 երրորդից—70 երրորդի 9 —
- 71 երրորդից—80 երրորդի 10 —
- 81 երրորդից—90 երրորդի 11 —
- 91 երրորդից—100 երրորդի 12—

§ 11. Ընկերութենի խորհրդարանը իրաւունք ունի յետ դարձնել անդամներին իրանց փողերը, ընկերութենի կասապուսը շատ փող ունեցողներից սկսելով, եթէ իր ունեցած բոլոր պատրաստ փողը չկարողանայ շահեցնել: Եթէ անդամը չկամենայ ստանալ էդ կերպով յետ տված փողը եւ ուզենայ ընկերութենի կասապուսը թողնել պահելու համար, էն ժամանակը նա գրիվում է էն գումարի շահիցը:

§ 12. Ընկերութենից հրաժարվող անդամին տվում է նրա ներկայացրած բոլոր փողերը ստացաթղթերով եւ էն կերպով ինչպէս որոշած է 10 § ումը, նմանապէս յետ է տվում նրան եւ նրան հասնելու վաստակը, բաց ի էն վաստակը, որն որ հասնելու է նրան վերջին քառորդի, այս ինքն երկը ամսվայ համար: Յետ է բռնվում նրանից բաց ի էդ եւ 50 կոպեկ՝ ընկերութենի պահեստական դրամազուլսին աւելացնելու:

Մ ա ն օ թ ու թ ի լ ւ ն : Բաց էն անդամ-

ները, որոնք էլ քաղաքից տեղափոխվելու պատճառով տոհմաված են հրաժարվիլ անդամութենից և նմանապէս էն մեռած անդամի ժառանգները, որոնք չեն կամենալ մեռած անդամի տեղը բռնել, չեն ենթարկվիլ էլ 50 կողէկի պահանջողութենին:

§ 13. Ընկերութենի գործերը կառավարելու համար խորհրդարան է կազմվում: Եւ խորհրդարանը բաղկանում է 7 մարդուց, որոնց ընտրում է անդամների ընդհանուր ժողովը իր միջից: Ընտրութիւնը լինում է գրով և ձէների շատութենով:

Մ ա ն օ թ ու թ իւ Ն : Չեն կարող խորհրդարանի անդամ դառնալ էն անդամները, որոնց հետ ընկերութիւնը պայմանաթղթերով է կապված:

§ 14. Ամեն տարի խորհրդարանից արձակվում են 2 կամ 3 անդամներ, ընկերութենի բացվելու առաջին երկու տարին վիճակով և յետոյ հերթով պահպանելով իրանց նորից ընտրվելու իրաւունքը:

§ 15. Խորհրդարանի անդամները իրանց պաշտօնը վարում են ձրիաբար և նրանցից ոչ մէկը, եթէ մէկ կանոնաւոր պատճառ չունենայ, չի կարող հրաժարվիլ պաշտօնից:

§ 16. Խորհրդարանը իր անդամների միջից ընտրում է նախագահ, վիցե-նախագահ, գործաւար և երկու հաշուպահ:

§ 17. Խորհրդարանի պարտաւորութիւններն է՝ ա. ընկերութենի գործերի վարելը և վաճառականների հետ պայմանաթղթերով կնպվելը, բ. ընկերութենի անդամների խնդիրների և զանգառների քնննելը և գ. ընկերութենի բոլոր անդամներից ընդհանուր ժողով կազմելը՝ տարեկան հաշիւը քննելու համար:

Մ ա ն օ թ ու թ իւ Ն : Ընկերութենի ընդհանուր ժողովի հաստատած տարեկան հաշիւը պէտք է հրատարակվի տեղական դաւառական գաղեթումը և ներքին գործերի միջնատրութենի գաղեթումը:

§ 18. Խորհրդարանը նշանակում է ընկերութենի համար մէկ զանձապետ, որն որ վարում է ելումուտի հաշուապետը, ընդունում է, ումից պէտք է և վճարում է, ում որ պէտք է փողեր և ամեն ամսվայ վերջին պարտական է խորհրդարանին հաշիւ տալ ընկերութենի փողերի մասին:

§ 19. Եթէ ընկերութիւնը իրա համար սեփական դուքանների բաց անէ, էն ժամանակը էլ դուքանների ծառայողները նշանակվում են խորհրդարանի կարգադրութենով:

§ 20. Թէ զանձապետը և թէ դուքաններումը ծառայողները խորհրդարանի կարգադրութենով ուժիկ են ստանում: Եւ ուժիկը բաղկանում է ընկերութենի գործածական դրամադիւրի վաստակի մէկ որոշած մասից: Գանձապետը էլ փողերով պէտք է աւելէ հաշուապետութենի համար հարկաւոր հաշուապետը և դիւանական ծախսերն անէ, իսկ դուքանների մէջ ծառայողները պէտք է դուքանների ծախսերը ծածկեն և դուքան բաց անելու տեղեր գտնեն:

§ 21. Տարին չորս անգամ, ամեն քառորդին հաշիւ է անվում: Զուտ վաստակը որոշելու համար, ընկերութենի ընդհանուր վաստակից հանվում են՝ ա. ընկերութենի կառավարելու ծախսերը, բ. ընկերութենի ինվեստարի համար յետ պահած $2\frac{1}{2}\%$, որն որ աւելանում է պահեստական դրամադիւրին, (§ 4) և գ. ընկերութենի անդամներին նրանց ներկայացրած ստացաթղթերով տված փողի շահը: Էս ծախսերը դուրս գալուց յետոյ մնացած զուտ վաստակի $\frac{1}{4}$ մասը աւելանում է պահեստական դրամադիւրին, իսկ $\frac{9}{10}$ մասը բաժանում են անդամները:

§ 22. Անդամների ընդհանուր ժողովները լինում են՝ սովորական և արտականոն:

§ 23. Սովորական ընդհանուր ժողովները լինում են տարին չորս անգամ՝ մարտին, յունիսին, սեպտեմբերին և դեկտեմբերին: Եւ ժողովները քննում են ընկերութենի ամենահարկաւոր գործերը, որոշում է ընկերութենի անդամներին նրանց փողի շահի տարւ չափը և ժամանակը և էլ ժողովներին ներկայացնում է ընկերութենի խորհրդարանը իր գործունէութենի մասին հաշիւ:

§ 24. Ոչ մէկ ինդիւր չի քննվի ընդհանուր ժողովումը, եթէ նրա մասին գոնեա երկու շաբաթ առաջ չլինի յայտնած խորհրդարանին:

§ 25. Արտականոն ընդհանուր ժողովները լինում են ամեն ժամանակ կամ խորհրդարանի կարգադրութենով և կամ դոնեա 20 անգամի պահանջողութենով: Եւ ժողովներումը կքննվին միայն էն խնդիրները, որոնց համար ընդհանուր ժողով է կազմվում:

Մ ա ն օ թ ու թ իւ Ն : Իւրաքանչիւր արտականոն ընդհանուր ժողովի մասին պէտք է յայտնվի 6 օրով առաջ ընկերութենի տանը առանձին յայտարարութենով և պէտք է հրատարակվի տեղական

դաւառական գաղեթումը, նշանակելով թէ քնն աւարկաներ պէտք է քննվին Կնտեղ:

§ 26. Ընդհանուր ժողովումը պէտք զընտրի բոլոր անդամների $\frac{1}{6}$ մասը: Գործերն էլ տեղ վճարում են հատարակ ձէների շատութենով, բայց եթէ խընդիրը վերաբերվում է ընկերութենի կանոնադրութենի փոփոխելուն կամ աւելացնելուն, էն ժամանակը գործի վճարում համար հարկաւոր է բոլոր անդամների $\frac{2}{3}$ -ը մասի համաձայնութիւնը:

§ 27. Խորհրդարանի և ընկերութենի անդամների մէջ ծագած վէճերը, ընկերութենումը և ընկերութենի դուքաններումը գտնված ծառայողների վրայ զանգառներ և ընկերութենի հասցրած ուտել խմելիքի յատկութիւնների և գների մասին ծագած անբաւականութիւնները քննվում են խորհրդարանումը: Եւ խորհրդարանը պէտք է բաւականութիւն տայ զանգառաւորին: Եթէ զանգառաւորը խորհրդարանի վճար անբաւական մնայ, էն ժամանակը գաճգառը տվում է էլ ուր համար կազմված առանձին կոմիտետին, որ բաղկանում է բոլոր անդամների միջից ընտրված 13 հոգուց, որոնք վերջապարպէս վճարում են գործը:

§ 28. Եթէ որ և իցէ հանդամանքներից ստիպված ընկերութիւնը պէտք է քակովի, էն ժամանակը ընդհանուր ժողովը վճարում է դադարեցնել ընկերութենի գործերը, բոլոր պատրաստի փողերը բաժանելով անդամների մէջ: Էս ընկերութենի քակովելու մասին հրատարակվում է տեղական դաւառական գաղեթումը և ներքին գործերի միջնատրութենի գաղեթումը:

Էս կանոնադրութենի հաստատուց յետոյ ներքին գործերի միջնատրը յուլիսի 28-ին հաստատուել է և Պետերբուրգի ուտել-խմելիքի ընկերութենի կանոնադրութիւնը: Եւ ընկերութիւնը կոչվում է «Պահպանողութիւն» և դրա կանոնադրութիւնն էլ էն հիման վրայ է, ինչպէս և Միտապայի կանոնադրութիւնը:

Էս տեսակ ընկերութիւնների սկիզբըն էլ էլ և Եւրոպայումը, առաջ Անգլիայումը, յետոյ Ֆրանսիայումը և յետոյ Գերմանիայումը: Առաջին էրպիսի ընկերութիւնը հիմնվել է 1843 թւին Անգլիայի փոքր քաղաք Բոչդելումը, որ

գանձում է Մանկատեր քաղաքի մօտ: Եւ ընկերութիւնների հիմնողները արհեստաւորներն էին, որոնք ի հարկէ աւելի նեղ վիճակի մէջն են, քան թէ միւս կարգի մարդիկը:

Եւ ընկերութիւնների նպատակը, ինչպէս երևում է կանոնադրութենից էս է, որ իրանց անդամներին հասցնեն յաւ ուտել-խմելիք և որքան կարելի է աժան գնով: Խեղճ արհեստաւորների և առ հասարակ բոլոր օրականով ապրող մարդկանց մեծ օգուտներ է տալիս էդ ընկերութիւնը, որովհետեւ նրանց դա տալիս է միջոց առանց մեծ դրամադրի բաւական փող յետ զցելու, պահպանողութիւն անելու: Եւ ընկերութիւնների գլխաւոր հիմն է իրան անդամներին միշտ լաւ ուտել-խմելիք հասցնելով փողոցի գներից փոքր ինչ պակաս գներով, բաժանել նրանց մէջ և բոլոր օգուտը, որ ստանում է ընկերութիւնը: Ընկերութենի դուքաններումը շատ ապրանք առնողը ի հարկէ աւելի օգուտ է տալիս ընկերութենին և էդուր համար էլ կարգադրած է, ընկերութենի դուքաններումը ուտել-խմելիք առնող անդամներին տացաթղթեր տալ, որով իմացվում է թէ ով ինչքան մանէթի և կոպէկի ապրանք է առել նշանակած ժամանակումը և երբ որ վաստակի բաժանելու ժամանակը գալիս է, անդամը իր սացաթղթերի համեմատ ստանում է վաստակի մասը—ի հարկէ շատ ապրանք առնողը՝ շատ, իսկ քիչ առնողը՝ քիչ:

Որ հազար էլ ուզենամ պահպանողութիւն անել, զայրաթով ապրել, բայց երբ առն ուտել, կին ու որդիք ունիմ պահելու և օրէնք միայն 1 մանէթ արդիւնք, ի հարկէ չեմ կարող բոլորովին փող յետ զցել. թէպէտ երբեմին և աւելորդ կոպէկներ մնան ջերումըս, բայց նրանց միսին էլ հեշտ է լինում, որովհետեւ մէկ նշանաւոր դուքանը չէ: Շատ քիչ մարդ կայ, որ կարողանում է կապէկներ ժողովելով բա-

ւական դրամադրուի կազմել: Մենք մէկ քանիսի վրայ չենք խօսում, որովհետեւ շատ քիչ են. մեր խօսքը շատի վրայ է, ընդհանուրի վրայ:

Բայց էդ ընկերութիւնների անդամը բոլորովին անդրամադրուի մարդ է, որն որ ընկերութիւն մտնելիս տալիս է միայն մէկ աննշան գումար, օրինակ ինչպէս վերոյիշեալ Մխտավայի ընկերութիւնինը 50 կոպէկ, շարունակ էդ ընկերութենի դուքաններից իր հարկաւոր ուտել-խմելիքն առնելով, ժամանակով բաւական դրամադրուի տէր է դառնում: Ահա լաւ օրինակ, որ կարող է պարզապարզ ընկնլ մեր խօսքերի համար: Բողբելի ընկերութենումը մէկը անդամ դառաւ 1850 թւի նոյեմբերին, միայն մէկ շինիւզ (35 կոպ.) տալով: Եւ մարդը շարունակ էդ ընկերութենի դուքաններից առնելով իր հարկաւոր ուտել-խմելիքը մինչև 1861 թւի յունիսը, այս ինքն 10 1/2 տարվայ մէջ մօտ 700 մ. դրամադրուի սացաւ ընկերութենից: Խեղճ արհեստաւոր և 700 մ. դրամադրուի—ի հարկէ մեծ բան է և էդ մեծ հետեւանքի պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ էդ ընկերութիւնը:

1843 թւի վերջին և 1844 թւի սկզբին Բողբելի ուտել-խմելիքի ընկերութենի դրամադրուի համուտ էր 186 մանէթին, բայց էս վերջին ժամանակներումը Բողբելի ընկերութիւնը ունի 1.) կողմնիւնների ապրանքների դուքաններ, որոնք տարին 800,000 մանէթի առուտուր են անում, 2.) ահագին մանրում ծախողի դուքան, 3.) երեք կօշկակարի դուքաններ, որոնց մէկ ամսվայ առուտուրը համուտ է 21,000 մանէթին, 4.) շորեղէնի դուքան, 5.) միս ծախելու հինգ դուքաններ, որոնց մէջ մէկ տարումը 539,861 1/2 Փուտա միս է ծախվել, 6.) մէկ մեծ շինութիւն, որտեղ 5000 աւելի հասոր զիջք կայ, բաց ի էդ՝ ժուրնայներ և դաղեթներ, 7.) մէկ ջրաղաց, որ տարին 1,102,000 մանէթի առուտուր է անում, 8.) մանելու Փարբիկայ, որ 491,700 մանէթի

դրամադրուի ունի: Շատ քիչ ժամանակ է հարկաւոր, որ Բողբելի ընկերութենի դրամադրուի 1 միլիօնին համի: Վաստակի 2 1/2% նշանակված է էդտեղ ընկերութենի անդամների որդեքրանց ուտում և կրթութիւն տալու համար:

Ֆրանսիայումը էդպիսի ընկերութիւն հիմնվեցաւ 1848 թւին Վիլ քաղաքումը: Հիմի դրա առուտուրը հասնում է տարին 1 միլիօն Ֆրանկին:

Մանսապէս և Գերմանիայի և Զվիցերիայի շատ քաղաքներումը հիմնվել է էդպիսի ընկերութիւններ:

Հիմի ուտել-խմելիքի ընկերութիւնների թիւը համուտ է Եւրոպայումը 500 ին, մօտ 100,000 անդամներ ունին և 15 միլիօնից մինչև 18 միլիօն մանէթին է համուտ դրանց առուտուրը, իսկ զուտ վաստակը 1 1/2 միլիօն մանէթին:

Եւ զարմանալի չէ էդպիսի օգտաւէտ ընկերութիւնների էդքան բազմանալը: Բանը էդպիսի ընկերութիւնների բազմանալու վրայ չէ կանգնում Եւրոպայումը: Եւրոպայումը մտադիր են բոլոր էդպիսի ընկերութիւնները միաւորել և էդպիսով իրանց անդամներին աւելի օգուտ տալ, քան թէ հիմի: Անգլիայումը Զոն Ալլէն անուանով մէկը դրել է էս նպատակին հասցնող մէկ պրոնէկտ: Ընկերութենի գլխաւոր տեղը կլինի, նրա կարծիքով, Վանդոնումը, որի հետ կապ կունենան բոլոր Անգլիայի ընկերութիւնները: Եւ մեծ ընկերութիւնը պատրաստութիւն կտեսնէ բոլոր Անգլիայի ընկերութիւնների համար և կարծիք չկայ, որ աւելի աժան էլ կարող է ձեռք բերել ուտել-խմելիքը և աւելի լաւը: Եւ ընկերութենի դրամադրուի պէտք է կազմվի 5 մանէթանոց ակցիաններից, այս ինքն թէ ամեն անդամ կտայ մէկ անգամով 5 մանէթ: Շատ հեշտ կարելի է մօտ 1 միլիօն մանէթի դրամադրուի կազմել էդպիսով, որովհետեւ Անգլիայումը ամենքը արդէն լաւ հասկացել են էդքան տարվայ փորձերից էդպիսի ընկերութիւնների զար-

մանակի օգտակարութիւնը:

Կարծիք չկայ նմանապէս, որ և Ռուսաստանումը էս տարի սկսվող էդպիսի ընկերութիւնները մի և նոյն օգուտը բերեն, ինչպէս և Եւրոպայումը: Կարծիք չկայ, որ մեզանում էլ մեծ հարկաւորութիւն կայ էդպիսի ընկերութիւններ կազմելու, որովհետև մեր հարուստ կարծված ժողովրդի մէջ շատ մեծ մասը համարեա թէ օրական ապրուստից զուրկ է: Եթէ էն խեղճերը չեն հասկանում և չեն էլ կարող զիտենալ էդպիսի ընկերութիւնների լինելը և նրանց տված օգուտները, բայց հասկացողի համար ներելի չէ հասկացնել ում հարկաւոր է էսպիսի օգտակար ընկերութիւնների հիմնելը:

Մենք էլ մեր կողմից սուրբ պարտաւորութիւն կհամարենք դառնալ էլն էս և սրա նման ընկերութիւններին և աւելի պարզ բացատրել բոլոր նրանց արժանաւորութիւնները:

ՁԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Ռուսաց պատմական ընկերութիւնը: Էս տարի մայիսի 23-ին բարձրագոյն հրամանով հաստատվեցաւ Ռուսաց պատմական ընկերութիւնը Պետերբուրգում: Էդ ընկերութեանի նպատակն է ժողովել, մշակել և տարածել Ռուսաստանի մէջ պատմութեանի վերաբերեալ դանազան նիւթերը և ձեռագրերը, որ դասվում են թէ թաղաւորական և մասնաւոր մասնադարաններումը և թէ մասնաւոր մարդկանց մօտ: Հաւաքելով էդ բաները ընկերութիւնը կտպէ ժամանակ ժամանակ առանձին տետրակներով էդ պատմութեանի նիւթերը ընկերութեանի խորհրդարանի կողմից դանազան հարկաւոր ծանօթութիւններով:

Էս տեղեկութիւնը մեր կարդացող հայերին հաղորդելով աչքներին առաջն ունեինք էն բարի ազդեցութիւնը, որ կարող է ունենալ ժողովրդի վրայ լաւ օրինակը: Մեր պատմութիւնը ոչ թէ մշակվում է և պարզվում, այլ մնում է էն վիճակումը, ինչպէս թողել են մեզ մեր պատմաբանները: Գիտ էս էլ պետք է ասել, որ մեր պատմաբանների աշխատասիրութիւնները ձեռագիր են մնացած մնալանում մինչև հիմի վանքերումը և մասնա-

ւոր մարդկանց մօտ: Շատ մեծ օգուտ կարող էր բերել մեզ հայերին էդպիսի մէկ պատմական ընկերութեանի կազմելը, որի նպատակը լինի ժողովել մեր պատմութեանի վերաբերեալ ձեռագրերը վանքերից և մասնաւոր մարդկանցից, մշակել և տարածել հայերի մէջ: Շատ բան մտի՞ն է մնացած մեր պատմութեանի մէջը, ի հարկէ էդպիսի մէկ ընկերութիւնը կարող էր շատ բան պարզացնել իր աշխատութիւններով:

Ստլանդեան տելեգրաֆի մասին: Սարգվեցաւ Եւրոպայից մինչև Ամերիկա տելեգրաֆ և էս տարի օգոստոսի 1-ից ընդունվում են դեպեչաներ ուղարկելու: Եւրոպայի Ռուսաստանից մինչև Ամերիկայ 100 տառի համար նշանակված է 131 մ. 25 կ., իսկ Սիբիրից և Կովկասից 100 տառի համար—164 մ.

Եթէ 100 տառից աւելի լինի հարկաւոր գրել, էն ժամանակը հաշվում է էս ձևով 100 տառից աւելի գումարը բաժանվում է 5 ով և իւրաքանչիւր 5 տառից առնվում է Եւրոպայի Ռուսաստանի համար 6 մ. 56 կ., իսկ Սիբիրի և Կովկասի համար—8 մ. 20 կ.

Սարսաւիտելի համբուլ: Հալէպ քաղաքից գրում են, որ էս տարի յուլիսի 10-ին Տիրք և Եփրատ գետերի մէջ, Կիարբեքիր քաղաքի մօտ 16 դիւղ իր բոլոր ժողովրդով կործանվեցաւ՝ գետնի յանկարծ բացվելուց: Գիտ էս անցքի մանրամասն տեղեկութիւնները չեն ստացված:

Խօշերայի մասին: Պետերբուրգումը օգոստոսի 17-ին հիւանդացաւ խօշերայով 208. մեռաւ 46: Օգոստոսի 18-ին հիւանդացաւ 185, մեռաւ 31:

Մոսկովումը օգոստոսի 13-ին խօշերայով հիւանդ կար 92, էդ օրն էլի հիւանդացաւ 14, մեռաւ 13: Օգոստոսի 14-ին հիւանդ մնաց 87:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԱԲԱԿ ԼԻԿԵՐՊՈՒԼԻՑ:

Լիկերպուլ օգոստոսի 9.

Էստեղե առուտուրը առ հասարակ լաւացաւ, մանաւանդ էն պատճառով, որ Անգլիայի բանկը ջաճացրուց իր դիսկոնտը մինչև 8%: Էդ բանի օգուտները արդէն երևում են բիրժայումը. վող ուղղները և նմանապէս փող առաջարկողները անթիւ են, էնպէս որ առուտրական գործերը էլ էն վաղուցվայ

դժուարութիւնը չեն կրում: Մասնաւոր բանկերը աւելի պահաս շահով են գրաւ վեր առնում վեկսիլները և թաղաւորական զանազան տոմսակները: Յոյս կայ, որ կարճ միջոցումն աւելի պէտք է ջաճանայ Անգլիայի բանկի դիսկոնտը:

Փողի առուտուրի լաւանալը ի հարկէ չէր կարող չունենալ բամբակի առուտուրի վրայ լաւ ներգործութիւն. անցեալ շաբաթ բամբակ հարցնող շատ էլաւ, բայց որովհետև շատ բերին և տեղիս պաշարն էլ շատ էր, վասնորոյ գները շատ չբարձրացան: Բոլոր տեսակներից շատ էստեղ Բրազիլիայի և Ամերիկայի տեսակներ են, որոնց գները էս շաբաթ աւելացան 1/4 պէնս, Եգիպտոսի և Հնդկաստանու տեսակները վեր ընկան մինչև 1 պէնս: Մէկ շաբաթումը ծախվեցաւ 85,220 հակ: Այժմ Լիկերպուլումը մնացած բամբակի պաշարը 882,331 հակն է, բայց անցեալ տարի էս միջոցին պաշարը հասնում էր 470,590 հակին: Այժմեան մազանդէքը Նոր Օրլէանի տեսակներինը—14 1/2 պէնս, Պէրնամբի և Մարանզամի՝ 16 1/2 պէնս., Իզմիրինը 8 1/2 պէնս, Բէնգալիայինը 7 պէնս:

Պետերբուրգ օգոստոսի 16.

Կուրսը Լօնդոնի վրայ . 29 պէնս:
— Պարիժի վրայ 307—308 1/2 սանտիմ:

5% Լատարեյով առաջին փոխառութեանի տոմսակները 109 1/2 մանէթ:

5% Լատարեյով երկրորդ փոխառութեանի տոմսակները . . . 107 1/2 մ:

Թէև բանկը ծախում է երկրորդ փոխառութեանի տոմսակները 107 1/2 մ., բայց մասնաւոր կերպով բիրժայումը ծախվում են 106 3/8 մ:

Ռսկին 6 մ: 55 կ.
Թիֆլիս սկստեմբերի 3:

Շաքարը Ֆրանսիացոյ . 9 մ: 70 կ.
— Ռսկին . . . 10 մ: 40 կ.

Արծաթը 84% —
— 72% 55 մ:

Ռսկին 6 մ: 50 կ.